https://doi.org/10.46991/hc.2023.19.1.200

# How to win. The theme of the fight and the image of the warrior in the khachkar figure relief of Artsakh

**Hamlet Petrosyan**
https://orcid.org/0009-0009-4914-1916
*Doctor of historical sciences, Professor*
*Head of department of Cultural Studies at YSU*
*hamletpetrosyan@ysu.am*

**Keywords:** Artsakh, khachkar, figure reliefs, mounted and foot warriors, weapons, horse, military operations, worship.

*One of the essential features of the khachkar culture of Artsakh is the figure relief depicting mortals, which has been especially widespread since the 12th century. The Artsakh khachkar figure relief depicts images, themes or scenes that usually have nothing in common with official Christianity, although they are placed next to the cross and accompanied by canonical inscriptions on the Last day. The figure reliefs represent warriors, princes and craftsmen, women and children. They represent the idealized image of the deceased in real life and the expectations of immortality after death. The themes of fight, hunting, feast, inconsolable mourning, "family portrait" and "waiting for a cross" can be distinguished.*
*One of the most common images in the reliefs are horsemen and foot soldiers, who are depicted with weapons, with family members, servants, in the ritual drinking of wine, etc.*

# Ինչպե՞ս հաղթել: Կռվի թեման և ռազմիկի կերպարն Արցախի խաչքարային պատկերաքանդակում

***Համլետ Պետրոսյան***
*պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր*
*ԵՊՀ մշակութաբանության ամբիոնի վարիչ*

**Հիմնաբառեր՝** Արցախ, խաչքար, պատկերաքանդակ, հեծյալ և հետիոտն ռազմիկներ, պաշտամունք ձի, սպառազինություն, ռազմական գործողություններ:

**History and Culture. Journal of Armenian Studies**, Vol.-1(19), 2023, pp. 200-212

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

Received: 23.01.2023
Revised: 12.02.2023
Accepted: 15.06.2023

© The Author(s) 2023

*Մահկանացուներին պատկերող արցախյան խաչքարային քանդակները, որոնք սկսում են տարածվել XII դարից, մի առանձնահատուկ երևույթ են հայ մշակույթում: Դրանք ներկայացնում են ոչ միայն առանձին կերպարներ, այլև, որպես կանոն, թեմաներ կամ տեսարաններ, որոնք սովորաբար ընդհանուր եզր չունեն պաշտոնական քրիստոնեության հետ, չնայած տեղադրված են խաչի հարևանությամբ և ուղեկցվում են վերջին օրերին ուղղված կանոնիկ արձանագրություններով: Քանդակները ներկայացնում են ռազմիկների, իշխանների ու արհեստավորների, կանանց ու երեխաների: Դրանք ներկայացնում են հանգուցյալի իդեալականացված կերպարն իրական կյանքում և անմահության ակնկալիքները մահվանից հետո: Պատկերաքանդակային հորինվածքներում կարելի է առանձնացնել կռվի, որսի, խնջույքի, անմխիթար սգի, «ընտանեկան դիմանկարի», «խաչի սպասման» և այլ թեմաներ: Քանդակներում ամենատարածված պատկերներից են հեծյալ ու հետիոտն ռազմիկները, որոնք պատկերված են զենքերով, ընտանիքի անդամների և սպասավորների հետ, ծիսական գինի ըմպելիս և այլն:*

## Как победить. Тема борьбы и образ воина в хачкарном рельефе Арцаха

**Гамлет Петросян**
Доктор исторических наук, профессор
Заведующий кафедрой культуралогии

***Ключевые слова.*** *Арцах, хачкар, фигуративный рельеф, конные и пешие воины, оружие, лошадь, боевые действия, военное дело, культ.*

*Фигуративные рельефы на хачкарах Арцаха, изображающие смертных – одно из особых проявлений в армянской культуре, которые начали распространяться с XII века. Они представляют собой не только отдельные фигуры, но и, как правило, темы или сцены, обычно не имеющие ничего общего с официальным христианством, хотя и помещены наряду с крестом и сопровождаются каноническими надписями, обращенными к Концу времен. Рельефы изображают воинов, принцев и ремесленников, женщин и детей. Они представляют собой идеализированный образ умершего в реальной жизни и ожидания бессмертия после смерти. В скульптурных композициях можно выделить темы борьбы, охоты, пира, траура, «семейного портрета», «ожидания креста» и другие. Одними из самых распространенных* образов в рельефах являются конные и пешие воины, которые изображены с оружием, с членами семьи, слуги, в ритуальном распитии вина и др.

* * *

***Ներածություն:*** Հոդվածում խաչքարային պատերաքանդակի, դրանց ուղեկցող արձանագրությունների և գրավոր այլ աղբյուրների համադիր քննությամբ ներկայացվում են արցախյան հեծյալ և հետիոտն ռազմիկների հանդերձանքն ու սպառազինությունը, ձիու պաշտամունքը, ռազմի դաշտ ճանապարհելու և ռազմից վերադառնալու ծեսերը, ռազմական

գործողություններին մասնակցությունը, հարազատների ու շրջապատի վերաբերմունքը դեպի ռազմիկները:

***Ժամանակը:*** Արցախի վաղքրիստոնեական քանդակում պատկերներն ընդհանրապես բացակայում են: Առաջին պատկերաքանդակները խաչքարային հորինվածքում երևան են գալիս XI դարի վերջերին ու XII դարի սկզբներին: Ռազմիկների քանդակներով թվագրված առաջին խաչքարերը երևան են , 1158, 1174, 1180, 1181, 1183, 1186, 1189, 1194, 1203, 1205, 1212, 1215 թվականներին: Կարելի է վավերացնել, որ երևույթի լայն դրսևորման հիմնական ժամանակաշրջանը XII դարի կեսերից մինչև XIV դարերի սկզբներն են, ժամանակներ, երբ Արցախի իշխանական տները կենաց-մահու պայքար էին մղում երկրամասի անկախության համար: Երևույթը շարունակվում է և հետագա դարերում՝ արդեն տեղափոխվելով տապանաքարերի վրա ու հարատևելով մինչև XX դարի սկզբները:

***Հետազոտության նախապատմությունը:*** Արցախի խաչքարային պատկերաքանդակի քննությանն առաջինն անդրադարձել է Հովսեփ Օրբելին: 1909 թ. Խաչեն կատարած գիտական գործուղման ժամանակ հետազոտողը հատուկ ուշադրություն դարձրեց հենց այդ քանդակներին՝ դրանց նվիրելով մի առանձին հոդված: Օրբելին նկարագրել է ընդամենը տասներեք հորինվածք, փորձել է պարզել նրանց առաջանալու ակունքները, կենցաղավարման ժամանակն ու կերպարների ինքնությունը՝ միանշանակ համարելով դրանք հայ մշակույթի եզակի դրսևորում [Орбели, 1915, 327-335, Орбели, 1963а, 196-203]: Հետագայում, սակայն, Օրբելին այդ քանդակների քննությամբ փորձել է ցույց տալ, որ դրանք «աղվանական» մշակույթի դրսևորում են [Орбели, 1963б, 347-361], հանգամանք, որից օգտվում են ադրբեջանցի «հետազոտողները» Արցախի խաչքարերը «աղվանականացնելու» իրենց փորձերում [Պետրոսյան, 2014][1]:

Արցախի խաչքարերի պատկերաքանդակների հետագա հետազոտությունները [Կարախանյան, 1976, Մկրտչյան, 1985, 15-18, Петросян, 1997, Կարապետյան, 1999, Պետրոսյան, 2008, 299-310, Պետրոսյան, Երանյան, 2022, 36-43) մեծաքանակ նյութ ու նոր մեկնաբանություններ են հավելել գիտնականի կատարածին, ինչը հնարավորություն է տալիս հայտնի չափով ընդարձակելու և ճշգրտելու այս ուշագրավ երևույթի դրևորումները:

***Հեծյալ և հետիոտն ռազմիկները. ձին, ռազմիկը, հանդերձանքը, սպառազինությունը:*** Արցախյան խաչքարային պատկերաքանդակը ռազմիկին ներկայացնում է լիովին սպառազինված՝ հեծյալ կամ հետիոտն (Նկ. 1, 2): Ձին փոքրամարմին է՝ համապատասխանեցված Արցախի անտառային տեղանքին, ինչը մանևրելու ավելի մեծ հնարավորություն է ընձեռում: Աչքի է ընկնում նրա խնամվածությունը. հարդարված են բաշը, պոչը: Ձին հանդիսավոր շարժման մեջ է, մանրամասն պատկերվում են սանձի երասանակներն ու ձգանները: Ձիու պոչը սովորաբար

[1] Տե՛ս, օրինակ, ադրբեջանական այս անդրադարձը, որտեղ Օրբելու՝ ժամանակի գաղափարաբանությանը տված տուրքը ներկայացվում է որպես Արցախի էթնամշակութային պատկանելության հարցում մեծ հետազատողի հիմնարար դիրքորոշում, տե՛ս Гусейнов, 2013: Այո՛, հայ պատմության և մշակույթի մեր անցյալի անվանի հետազոտողները մեծ գործ են արել: Սակայն այսօր կարևոր է ոչ միայն սովորել, բարձր գնահատել և հիանալ, այլ նախևառաջ զարգացնել, մեկնաբանել, ճշտել նրանց կատարածը՝ հնարավորություն չտալով հայտնի ու անհայտ ընդդիմախոսներին մեթոդաբանություն դարձնել մեր մեծերի թեական մտքերը, վրիպումները կամ քաղաքական խոտորումները և դրա օգնությամբ խեղաթյուրել ու սեփականել մեր մշակութային ժառանգությունը:

հանգուցված է, վզից կախված է ձվաձև-երկարավուն կախիկ: Թամքը փոքր է և սովորաբար հեծյալի տակ չի երևում, նրա առկայության մասին կարելի է դատել վզափոկով ու պոչի տակով անցնող փոկով, երբեմն թամբից կախված են ասպանդակները:

Նկատենք, որ Արցախը հետագայում քաջ հայտնի դարձած ղարաբաղյան ձիու (Նկ. 3) հայրենիքն էր, ուրեմն պիտի ենթադրել, որ ձիու հանդեպ այստեղ առանձնահատուկ վերաբերմունք կար: Ըստ վրաց պատմիչի՝ Թամար թագուհու ամուսին Դավիթ Սոսլանը Գանձակի մահմեդականների դեմ արշավանքի է ելել արցախյան ձի հեծած. «Այնժամ թագավորը զինվեց ու զինավորվեց, նստեց դեղնբարը, որը անուն հանած լինելու համար գնել էր Վախթանգ Խաչենացուց, տալով բերդ և գյուղ, որք են Ճարմանը» [Թորոսյան, 1992, 407]: Դեղնբարը վրացերեն բնագրի «զերդագի» թարգմանությունն է: Զերդագն իր հերթին փոխառություն է պահլավերեն zartak կամ պարսկերեն zardak բառերից, որը նշանակում է դեղին, դեղնագույն (ոսկեգույն) և զարտակ, զերդակ, զառտ ձևերով կիրառվել է և գրաբարում [Թորոսյան, 1992, 533-534, ծան. 242]: Նկատենք, որ Արցախի ներկա բարբառում գործածական է *զարդա* բառը՝ «ընտիր դեղնակարմիր ցորեն» (հմմտ. «յերի արտի զարդա» արտահայտությունը) նշանակությամբ: Հակված ենք կարծելու, որ զերդագը տվյալ դեպքում (այսինքն՝ վրացերեն տեքստում) ոչ թե սոսկ երանգ նշող, այլ արցախյան ձին ցուցող հատուկ տերմին է՝ ծագած բառի հենց արցախյան տարբերակից, քանի որ արցախյան ձիու հիմներանգը հենց դեղնակարմիրն է: «Ոսկեգույն փայլփլում է ոչ թե նրա մազածածկույթը, այլ մաշկի գույնը, այդ պատճառով էլ թվում է, թե փայլը գալիս է ոչ թե մակերեսից, այլ խորքից. ...դարաբաղյան ձին ոսկի է ցայում, վազում է ոսկու մեջ»,– այսպիսի հիացմունքով է նկարագրել արցախյան ձիու հիմներանգը հայտնի արձակագիր Մարիետա Շահինյանը [Шагинян, 1931, 345]:

Քննարկվող քանդակներում առանձնակի ջանասիրությամբ պատկերվում են նաև զենքերն ու գլխարկը: Ձիու հետ միասին դրանք հանդես են գալիս որպես անձի կարգավիճակն արտահայտող կարևոր հատկանիշներ:

Հեծյալը նստած է հանդիսավոր, ուղղահայաց դիրքով, ողջ մարմինը ներկայացված է կողքից և միայն գլուխը՝ դիմահայաց (Նկ. 4): Հանդերձանքից առանձնանում է եռանկյունաձև կամ կոնաձև սաղավարտ-գլխարկը, որը հաճախ ավարտվում է սուր, երբեմն էլ ռոմբաձև ելուստով: Սաղավարտի ստորին եզրից մինչև ուսերն են իջնում երկու ծամ. որոշ օրինակներում հստակորեն դիտելի է, որ դրանք ոչ թե ռեալ հյուսքեր են, այլ գլխանոցի մաս: Որոշ քանդակների վրա դիտվում է միջին լայնության գոտին, որից սովորաբար երկու փոկերի օգնությամբ կախված է կապարճը կամ թուրը: Ռազմիկները հագել են ծնկից ներքև իջնող լայն չուխա: Հեծյալը սովորաբար մի ձեռքով բռնում է սանձը, մյուսով՝ նիզակը: Նիզակն ավելի երկար է, քան ձին, և ավարտվում է շեղանկյուն սայրով: Ներկայացված են նաև աղեղը, կապարճը, երկարավուն թուրը, երբեմն վահանն ու գուրզը: Ի տարբերություն հեծյալների՝ հետիոտն ռազմիկները զինված են նետ-աղեղով կամ թրով: Երբեմն միասին են պատկերվում երկու հեծյալ, նույնիսկ՝ երեք հետիոտն զինյալ:

Արցախի, Ուտիքի, Ջուղայի խաչքարերն աղվանական հայտարարող Ախունդովի հերթական «հայտնագործությունը» վերաբերում է վերոնշյալ ռազմիկներին: Երևույթին ծանոթ լինելով միայն Գանձասարի մի խաչքարի բեկորով ու սաղավարտի կախիկներն անվերապահորեն ընդունելով որպես իրական ծամեր, չիմանալով խաչքարի կոնկրետ ժամանակագրությունը (խաչքարը թվագրված է 1174 թվականով) և հաշվի չառնելով էթնոմշակութային միջավայրը՝ նա հայտարարում է, թե «աղվանական» խաչքարերը կարող են ունենալ օտար ու նույնիսկ մոնղոլ

ռազմիկների պատկերներ՝ «բնորոշ խալաթով, գլխարկով, երկու ծամերով և ձեռքներին նիզակ» [Ахундов, 1986, 244-245]: «Ծամերը» միայն մոնղոլներին բնորոշ համարելու «գյուտն» այնքան է հրապուրել ադրբեջանցի յուրացնողներին, որ նրանց չի զգոնացրել նաև ռազմիկի երկար նիզակը՝ զինական մի ատրիբուտ, որը բացարձակապես բնորոշ չէր մոնղոլներին: Հանրահայտ է, որ մոնղոլների հիմնական զենքը նետ-աղեղն էր, որի պատճառով էլ հայերը նրանց նետող (այսինքն՝ նետաձիգ) են անվանել: Գրիգոր Ականեցին, որն ապրում էր Գանձասարից ոչ հեռու գտնվող Ականա բերդում և մանրամասնորեն նկարագրել է մոնղոլների արշավանքը Անդրկովկաս և, ի մասնավորի Արցախ, իր գիրքը վերնագրել է «Պատմութիւն ազգին նետողաց» [Գրիգոր Ականեցի, 1961]: Սակայն ամենաէականն այն է, որ «ծամավոր» այս ռազմիկների պատկերներն Արցախի խաչքարերի վրա վկայված են XI դարի վերջերիս սկսած՝ ժամանակներ, երբ Մերձավոր Արևելքում ոչ միայն չէին տեսել, այլև նույնիսկ չէին լսել մոնղոլների մասին: Ինչ վերաբերում է երկարագես ու ծամավոր զինյալներին ընդհանրապես, ապա, ինչպես փորձել ենք ցույց տալ մանրամասն մի քննության մեջ [Պետրոսյան, 2001, 75-81], դրանք այնքան էլ բացառիկ չէին հայ զինուժում ու մշակույթում, կազմում էին երիտասարդ ռազմիկների դասը և հայկական աղբյուրներում հայտնի են «մանուկ» անունով: Փաստերը խեղաթյուրելու կամ «անտեսելու» մեծ վարպետ է նաև Ռ. Գեուշևը: Արցախի Ճանկաթաղ գյուղի Ծովատեղ հնավայրի խաչքարերը (որոնց մի զգալի մասը ժամանակին ինքն էլ գողացել-տարել է Բաքու) նա ներկայացնում է առանց կոնկրետ աշխարհագրական տեղադրությունը ճշտելու՝ որպես Կովկասյան Աղվանքի Սխնախ հնավայրի նյութեր՝ «չհիշելով» հայերեն արձանագրակիր ու թվակիր օրինակները և հայտարարելով, որ ի տարբերություն հարևան երկրների՝ մարդկային կերպարները Կովկասյան Աղվանքի բնորոշ հատկանիշներից են [Геушев, 1984, 102-103]:

Հաջորդ խումբը կազմում են այն հորինվածքները, որտեղ ռազմիկները ներկայացված են մերձավորի և/կամ ծառայի հետ: Այս խմբում հատուկ հետաքրքրություն են ներկայացնում այն տեսարանները, որտեղ հետիոտն կերպարը նույն չուխայով ու գլխարկով է, ինչ ռազմիկը (ինչը ցուցում է, որ գործ ունենք տղամարդու՝ ամենայն հավանականությամբ որդու կամ ծառայի հետ), բայց, որպես կանոն, անզեն, մի ձեռքում ունի մի սափոր, իսկ մյուսով, հավանական է, ռազմիկին է մեկնում , գինով լիքը գավաթը (Նկ. 5): Որոշ տեսարաններում գավաթն արդեն գտնվում է ռազմիկի ձեռքին (Նկ. 6): Եզակի դեպքերում կարող են հավելվել ու ուտելիքներով ծանրաբեռնված սեղան-սինիները, ինչը նույնպես ամրապնդում է այն ենթադրությունը, որ գործ ունենք գինու ծիսական ըմպումը ներկայացնող տեսարանների հետ, որը հավանաբար պատկերում է ռազմի դաշտ ճամփելու կամ ռազմից վերադառնալիս դիմավորելու հանդիսավոր ծեսը:

Սափորն ու գավաթը հանդես են գալիս նաև մի շարք տեսարաններում, որոնցում բացակայում է սպառազինությունը: Խոսքը վերաբերում է բուն խնջույքի տեսարաններին, որտեղ պատկերվում է հանգուցյալը՝ միայնակ կամ մերձավորների շրջապատում, դիմացը դրված ուտելիքներով լի սեղան-սինիներով (Նկ. 7): Հանգուցյալին գավաթ են մատուցում կամ արդեն ձեռքին գավաթ ունի բռնած: Խնջույքի տեսարաններում կարող է բացակայել և ռազմական հանդերձանքի ամենակարևոր մասը՝ գլխարկ-սաղավարտը: Այսպիսով, ստացվում է տեսարանների մի շարք, որ կարելի է սկսել ռազմիկից և ռազմական ուժի ցուցադրությունից՝ ավարտելով խնջույքով:

***Ռազմիկի հանդեպ շրջապատի վերաբերմունքը:*** Ռազմիկի հանդեպ շրջապատի վերաբերմունքի առումով կարևոր է, այսպես կոչված, «անմխիթար սգի» թեման, որը ներկայացնում է ռազմիկին ու նրա ընտանիքին՝ կնոջը, երեխաներին (Նկ. 8)։ Որոշ տեսարաններում հատուկ ներկայացվում է որդով հիացող և նրա կորուստը ողբացող մայրը։ Այսպես, Կոշիկ անապատի մի խաչքարի վրա (Նկ. 9)՝ սալի ստորին մասում, ձախից պատկերված է նիզակով, աղեղով ու կապարճով զինված հեծյալը, իսկ դիմացը՝ սալի աջ կողմում՝ թախտին նստած է մայրը՝ համապատասխան գրությամբ. «Մայրն»։ Արձանագրությունը հայտնում է. «Թ. :ՈԿԴ։ (1215 թ.)։ Ես Չաւիր կանգնեցի զխաչս որդոյ իմոյ Գրիգորոյ. յիշեցէք» [ԴՀՎ, 5, 27]։ Նույնը տեսնում ենք և Հավապտուկ վանքի մի խաչքարի վրա։ Երկու դեպքում էլ մայրերը ձեռքերը պարզել են դեպի որդին՝ կարծեք հիացմունք ու կորստյան վիշտ արտահայտելով։

***Մասնակցությունը ռազմական գործողություններին:*** Խաչքարային առանձին արձանագրություններ և գրավոր այլ աղբյուրներ հնարավորություն են տալիս ներկայացնելու նաև ռազմական գործողություններին մասնակցելու որոշ մանրամասներ։ Օրինակ՝ Խաչենի իշխան Հասան Վախթագյանն 1182 թ. խաչքարային արձանագրությունում իր կյանքի հիմնական գործն է համարում հենց պատերազմելը. «Ես Հասան որդի Վախտանգա, տէր Հաթերքո և Հանդաբերդոյ, Խաչինաբերդո և Հաւախաղացին կացի յաւագութեան ամս։ Շատ պատերազմաւ եւ յաղթեցի թշնամեաց իմոց աւգնականութեամբն Աստուծոյ» [ԴՀՎ 5, 198]։ Առաջաձորի խաչքարային արձանագրություններից մեկը ներկայացնում է մի ռազմիկի «արկածային» պատմությունը (Նկ. 10)։ Արձանագրությունը տեղադրված է քանդակային հորինվածքից ներքև և զբաղեցնում է սալի մակերեսի մեկ երրորդը։ Այն հայտնում է. «Թվ :ՉԶ։ (1257 թ.). իշխանութ[եամբն] Զալալին, պատրոնութ[եամ]բն Հասանայ, ես՝ Սահլուն գնացել եմ ի Մուլոդն ու գնացել եմ ի Սոնեթ ու գնացել եմ ի Կասարիայ ու :Բ։ հետի ի առազմ եմ մտել ու խաղաղութ[եամբ] ի դուս եկել։ Կանգնեցի խաչս ինձ և ամուս[ն]ոյ իմո. յաղաթս յիշէք...»։ Ինչպես ցույց ենք տվել այս արձանագրության մանրամասն քննությամբ [Петросян, 1991], Սահլունը Խաչենի իշխանության զորաջոկատներից մեկի կազմում մասնակցել է մոնղոլական արշավանքներին դեպի Մուլուդ (Մուլուդը Հյուսիսային Իրանի անմատչելի լեռներում տեղադրված իսմայիլիտ աղանդավորների երկիրն էր՝ Ալամութ կենտրոնով), Կեսարիա և Սվանեթ, նաև երկու ճակատամարտի և ողջ մնացել։ Հավանական է, որ ռազմի դաշտում մեր հերոսը խոստացել է ողջ մնալու դեպքում խաչքար կանգեցնել, ինչն էլ իրականացրել է հեռավոր արշավանքներից բարեհաջող վերադառնալուց հետո։ Եթե նկատի ունենանք, որ խաչքարը կանգնեցվել է հեռավոր արշավանքներից վերադառնալուց անմիջապես հետո կարելի է ենթադրել, որ Սահլունի համար խաչքար կանգնեցնելու անմիջական առիթը այդ դաժան փորձություններից ողջ վերադառնալն էր, և որ ծանր պահերին նա, փրկություն հուսալով, խոստում է տվել առաջին իսկ հնարավորության դեպքում իր երախտագիտությունը հայտնել բարձրյալին։ Հենց սրանով կարելի է բացատրել զուտ պատմողական հատվածի առկայությունը կանոնիկ արձանագրության տեքստում։ Ինչպես վկայում են ժամանակի գրավոր աղբյուրները, մոնղոլները սովորաբար հայկական զինուժը դնում էին առաջնագծում և վերահսկում նրա գործողությունները թիկունքից [Կիրակոս Գանձակեցի, 1961, 269, Ձեռագրերի հիշատակարաններ, 1984, 229]։ Ահա թե ինչ է գրում այդ մասին Գրիգոր Ականեցին. «Եվ գլխաւորն զաւրուն Բաչու նուինն յաջողեալ էր ի գործ պատերազմի. ուր և հանդիպէր ընդդէմ աղեացն իւրեանց, բազում յաղթութիւն առնէր. բայց պատճառ յաղթութեանն էին

Հայոց և Վրաց իշխանքն, որ լինէին երես զառաջինն, եւ ուժգին բախելով ի թշնամիսն յարձակէին. եւ ապա զկնի նոցա Տաթարն նետիւ եւ աղեղամբ» [Գրիգոր Ականեցի, 1961, 20]:

Մեր կողմից քննարկված պատկերաքանդակները, որոնք վկայում են առանձնահատուկ համակրանքի և պաշտամունքի մասին, որ վայելում էին ռազմիկները, կարելի է լրացնել և մի շարք արձանագրական տեղեկություններով, որոնցում մայրերը, կանայք և որդիները հատուկ շեշտում են իրենց հարազատների հայտնի և քաջ զորական լինելու հանգամանքը: Օրինակ՝ Վաճառի սուրբ Ստեփանոս եկեղեցու մի արձանագրության մեջ կարդում ենք. «Ես՝ Գրիգոր՝ որդի քաջ զաւրականին Ջաջուռա» [ԴՀՎ, 5, 79], Դադիվանքի կաթողիկե եկեղեցու կառուցման արձանագրության մեջ Վերին Խաչենի իշխանուհի Արզուխաթունն այսպես է ներկայացնում իր ավագ որդուն. «...Անդրանիկն իմ Հասան սպանաւ ի թուրքաց պատերազմին վասն քրիստոնեական հաւատոյս» [ԴՀՎ, 5, 199]: Կամ էլ 1201 թ. խաչքարային մի արձանագրություն հայտնում է. «Պատրոնիկն Վասակ ... երթեալ եղև ի Գոլաշտեան և առ զնա յանօրինաց՝ օգնութեամբն Ա[ստուծո]յ և... ինքն նահատակեցաւ ի վերայ քրիստոնէից, և իջեալ լոյս ի վերայ ի տեսութիւն բազմաց» [ԴՀՎ, 5, 130]: Հայրենիքի համար զոհված զորականները կոչվում են նահատակ, արիական, հսկայազաւր և նման այլ բնութագրերով:

Առաջաձորի մի եզակի արձանագրություն հնարավորությաւն է տալիս խոսելու նաև Խաչենի զորքի երդմնակալության մի ծեսի մասին: Առաջաձոր գյուղի Անապատ ժայռափոր վանքի 1249 թվականի մի արձանագրության ընդարձակ տեքստն ի մասնավորի հայտնում է.

«Արքայ Ջալալայ Դաւլայ եւ Աթաբակ՝ որդին նորայ, իշխան Խաչինոյ եւ Ըռանայ, Ուքան մանուկն Հասանա… սիրով միաբանան ի սմա այլ մեծամեծ իշխանք և զաւրք նոցայ՝ միայհամուռ, համակից միմեանց, աւրինեալ, հզաւրացեալ եղիցին ի կամս Ա[ստուծո]յ հաւր եւ նմայ փառք յաւ[իտ]եանս, ամէն:

Տունկս բարի ծառս ամենի,
Պտուղն բիւր հազար բարի,
Ով փափագի՝ աստ վայելի,
Կենաց յուսոյն/ նայ հասանի:

Ողորմի Աստուած միաբանելոցս ի սմա սիրով եւ արդեամբք, եւ ամենայն բարեպաշտ իշխանաց մեր/ոց տացէ Ա[ստուա]ծ զբարեմտութի[ւն]/ հոգոյ եւ մարմնոյ...» [ԴՀՎ, 5, 88-89]: Խաչենի իշխանների, զորավարների և զորքի այս հավաքը, ինչպես կարելի է մակաբերել արձանագրությունից, վավերացնում է մի հատուկ ծես, որի ընթացքում երդում են տալիս և ամրապնդվում խաչի զորությամբ, որն արձանագրության մեջ ներկայացվում է բանաստեղծական հանգավորված տեքստով («Տունկս բարի ծառս ամենի...»):

***Եզրակացություն***: Խաչենի խաչքարային պատկերաքանդակն առանձնակի տարածում գտավ աշխարհաքաղաքական տեսանկյունից խիստ փոփոխական ժամանակաշրջանում՝ սելջուկյան արշավանքներ և տիրապետություն, լեռնաշխարհի անկախության համար պայքար, մոնղոլական արշավանքների դիմակայում ու տեղատվություն: Բոլոր այս երեք փուլերն էլ ուղեկցվում էին ռազմական ընդհարումներով, արշավներով ու ճակատամարտերով: Արցախի ռազմական ուժը մի դեպքում ազատագրում էր իր հայրենիքը՝ կենաց-մահու կռիվ մղելով, մի այլ դեպքում դաշնակցում էր տարբեր ուժերի հետ, նույնիսկ ստիպված էր մոնղոլների հետ մասնակցել նրանց հեռավոր արշավներին: Բայց անկախ այդ փոփոխություններից՝ զինված լինելը, կռվին

պատրաստ լինելը, ռազմիկի դերակատարման կարևորության ընկալումը մերձավորների, իշխանների, եկեղեցու և ողջ հանրութի կողմից մնում էին անփոփոխ։ Կենսընթացն ընկալվում էր որպես հավերժ կռիվ, որին պիտի միշտ պատրաստ լինել, ինչն էլ պայմանավորել է քննարկվող քանդակների կերպարային ու թեմատիկ բազմազանությունը, գիտական քննության առումով ուշագրավությունն ու արդիականությունը։

Նկ. 1. Հեծյալ ռազմիկը, 1200 թ., Վաճառ, լուս.՝ Հ. Պետրոսյանի

Նկ. 2. Հետիոտն ռազմիկներ, 12-13-րդ դարեր, Ծմակահող, լուս.՝ Հ. Պետրոսյանի

Նկ. 3. Արցախյան ձի, լուս.՝ Հ. Պետրոսյանի։

Նկ. 4. Հեծյալ ռազմիկ, խաչքարային պատկերաքանդակ,
1203 թ., Կոշիկ անապատ, լուս.՝ Հ. Պետրոսյանի:

Նկ. 5. Հեծյալ ռազմիկներն ու մատռվակը, խաչքարային պատկերաքանդակ,
XII-XIII դարեր, Պառավաձոր, լուս.՝ Հ. Պետրոսյանի:

Նկ. 6. Հեծյալ ռազմիկը զինու զավաթով, խաչքարային պատկերաքանդակ, XII-XIII դարեր, Հանդաբերդի վանք, լուս.՝ Հ. Պետրոսյանի։

Նկ. 7. Խնջույք, ընտանիք, խաչքարային պատկերաքանդակ, 1253 թ., Շիկաքար, լուս.՝ Հ. Պետրոսյանի։

Նկ. 8. Հեծյալ ռազմիկն ու իր ընտանիքը, խաչքարային պատկերաքանդակ, 1202 թ.,

Հարգոմեր, լուս.՝ Հ. Պետրոսյանի

Նկ. 9. Մայրը և ռազմիկ որդին, խաչքարային պատկերաքանդակ, 1212 թ.,
Կոշիկ անապատ, լուս.՝ Հ. Պետրոսյանի։



Նկ. 10. Սահլունի արձանագրությունը, 1258 թ., Առաջաձոր, լուս.՝ Հ. Պետրոսյանի։

## Գրականության ցանկ

**Գրիգոր Ականեցի,** Պատմութիւն ազգին նետոողաց, հայերեն բնագիրը և վրաց. թարգմանությունը Ն. Շոշիանշվիլու, Թբիլիսի:

ԴՀՎ 5 – Դիվան հայ վիմագրության, պր. 5, Արցախ, կազմեց **Ս. Բարխուդարյան,** Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ.:

**Թորոսյան Խ. 1992,** «Թագավորների պատմությունն ու գովաբանությունը» որպես Զաքարյան Հայաստանի ու Զաքարյանների պատմության սկզբնաղբյուր, Երևան:

**Կիրակոս Գանձակեցի 1961,** Պատմութիւն Հայոց, աշխատասիրությամբ **Կ. Մ. Մելիք-Օհանջանյանի**, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ.:

Ձեռագրերի հիշատակարաններ 1984 - **Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ. ԺԳ դար, կազմեց Ա. Ս. Մաթևոսյան, ՀՍՍՀ ԳԱ հրատ.:**

**Կարախանյան Գ., 1976,** Երաժիշտ կատարողների քանդակներ 12-13-րդ դդ. խաչքարերի վրա // ԼՀԳ, թիվ 3, էջ 99-105:

**Կարապետյան 1999,** Հայ մշակույթի հուշարձանները խորհրդային Ադրբեջանին բռնակցված տարածքներում, Երևան:

**Մկրտչյան Շ. 1985,** Լեռնային Ղարաբաղի պատմաճարտարապետական հուշարձանները, Երևան, «Հայաստան» հրատ.:

**Պետրոսյան Հ. 2001,** «Մանուկի» կերպարը ուշմիջնադարյան հայ տապանաքարային քանդակում (15-17-րդ դարեր), Թուխ մանուկ, Երևան, էջ 68-84:

**Պետրոսյան Հ. 2008,** Խաչքար. ծագումը, գործառույթը, պատկերագրությունը, իմաստաբանությունը, Երևան, «Փրինթինֆո»:

**Պետրոսյան Հ.,** Հովսեփ Օրբելին և Արցախի խաչքարային պատկերաքանդակի հետազոտության խնդիրը, 2014, «Վեմ», թիվ 2, էջ 100-113:

**Պետրոսյան Հ. 2022,** Երանյան Ն., Արցախի կոթողային մշակույթը, Երևան, «Անտարես»:

**Ахундов Д. 1986,** Архитектура древнего и раннесредневекового Азербайджана, Баку, Азернешр.

**Геюшев Р. 1984,** Христианство в Кавказской Албании, Баку, Елм.

**Гусейнов Р.,** Кого уличают армянские и неармянские ученые в присвоении албанского культурно-исторического наследия? // http://www.rizvanhuseynov.com/2012/03/blog-post_01.html.

**Орбели И. А. 1915,** Бытовые рельефы на крестных камнях Хачена 12-13-го веков - Записки Восточного отделения Императорского русского археологического общества, т. 22, вып. 3-4, с. 327-335.

**Орбели И. А. 1963,** Бытовые рельефы на крестных камнях Хачена 12-13-го веков Избранные труды, Ереван, с. 196-203:

**Орбели И. А. 1936,** Албанские рельефы и бронзовые котлы // Избранные труды, Ереван, с. 347-361.

**Петросян Г. 1991,** Новонайденный хачкар из Арачадзора, «Լրաբեր հասարակական գիտությունների», թիվ 4, էջ 147-152.

**Петросян Г. К 1997,** интерпретации группы сюжетных рельефов на хачкарах Арцаха - ИФЖ, N 2, с. 164-171.

**Шагинян М. 1931,** Нагорный Карабах. Советское Закавказье, М.-Л.